

## ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի աշխատանքային այցը Վայոց ձոր

28.04.2015



Այսօր՝ ապրիլի 28-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանն ընդունել է աշխատանքային այցով Վայոց ձորի մարզ ժամանած ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանին: Մարզպետ Հարություն Սարգսյանի ուղեկցությամբ նախարար Գաբրիել Ղազարյանն աշխատանքային խմբով նախ մասնակցել է Խորհրդային Միության հերոս, վայոցձորցի (ծննդավայրը՝ Վայոց ձորի մարզ, գյուղ Գնիշիկ) Վահիկ Լևոնյանի հիշատակին նվիրված վոլեյբոլի ամենամյա հուշամրցաշարի բացման հանդիսավոր արարողությանը, ապա այցելել է Եղեգնաձորի քաղաքային մարզադաշտ և լողավազան, ծանոթացել տիրող իրավիճակին: Այնուհետ մարզպետն ու նախարարը դիտել են հուշամրցաշարի առաջին խաղը: Նշենք, որ հուշամրցաշարին մասնակցում են 14 թիմեր:

Նախարարի հաջորդ կանգառը մարզպետարանի նիստերի դահլիճն էր, ուր հանդիպում կայացավ սպորտի բնագավառի մարզային ներկայացուցիչների հետ, որի ընթացքում բարձրացվեցին սպորտ դահլիճները մարզական գույքով ապահովելու, կառույցները վերանորոգելու հարցեր: Նախարարն էլ իր հերթին բարձրացրեց ֆիզկուլտուրայի դասաժամերը պատշաճ մակարդակով կազմակերպելու հարցը՝ որպես աճող սերնդի առողջ ապրելակերպի ապահովման գրավական:

Մարգպետ Հարություն Մարգայանը շնորհակալություն հայտնեց նախարար Գաբրիել Ղազարյանին Վայոց ձորի մարզի հանդեպ դրսևորած ուշադրության համար և նշեց, որ ինքը խիստ հետաքրքրված է մարզում ֆիզիկական դաստիարակության վիճակով և այսուհետ այդ խնդիրը կլինի իր ուշադրության և հսկողության ներքո: Նշվեց, որ հնարավոր բոլոր քայլերը կձեռնարկվի առաջիկայում Վայոց ձորում մարզական կյանքն աշխուժացնելու նպատակով: Հանդիպման ավարտին նախարարը Հայաստանի Հանրապետության մարզական հանրագիտարանով և մարզահագոստով պարզևատրեց „Ամենախելացին,, հեռուստամրցույթում մարզական գիտելիքներով աչքի ընկած Արենիի միջնակարգ դպրոցի աշակերտ Էրիկ Եղյանին: Վերջում նախարարն ու մարգպետն այցելեցին Վայք, Ջերմուկ և Մալիշկա համայնքների մանկապատանեկան մարզադպրոցներ և մարզադաշտ, ինչպես նաև շրջայց կատարեցին Ջերմուկի ճոպանուղու տարածքում: